

ՀԱՅՐԵՆԻՑԸ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՐՎԱՆՉՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

«Հայրենասիրություն էմի անօփու և զերհարգա առամբնաւրյուն է և խսկական բարյաց բան արմաս».

Դ. ՄՐՎԱՆՉՅԱՆ

Ա.


Գարեգին եպիսկոպոս Մրվանձտյանը իր ստեղծագործական մկրտությունը ստացալ Տաճկահայաստանի խոշորագույն գործիչ, հայ ժողովրդի վշտերը բաժանող Մկրտիչ վարդապետ Խրիմյանի հայրենասիրական ավագանում, Խրիմյանի, որը 1850-ական թվականներին հիմնադրած Վարագա դպրոցովն ու «Ալքոնուի Վասպուրական» ամսաթերթով անուրանալի ծառայություն մատուցեց հայ ժողովրդին:

Վանի Այգեստանից էր Մրվանձտյանը, իր աշակերտական սեղանից մինչև գործունեության վերջին օրերը նա հետևեց իր ուսուցչին՝ Խրիմյանին: Իր ուսուցչի նման նա անձնվիրաբեր աշխատեց հայ ժողովրդի բարօրության համար: Իր գործունեության ընթացքում հավատարիմ մնարով իր ուսուցչին նա ցած ջղբեց այն հոգմոր զենքը, որ նրան չնորսել էր Մկրտիչ Խրիմյանը իր աշակերտի երիտասարդական օրերից: Այդ զենքը հայրենասիրական այն ովքն էր, որ այնքան գուրզուրանքով անջնջելի պահեց մեծ հայրենասիր Մրվանձտյանը:

Սիրով առ ժողովուրդը և վառ հույսերով դեպի նրա ապագան Մրվանձտյանը

ընդունեց հոգեվորականի սքեմը: Հոգեոր գործը առաջ բաց էին մասսաների համար աշխատելու դռները: Եկեղեցիների բեմերը և մանական կրթական հաստատությունները նրանց համար արիբուն էին հանդիսանում: Այդ արիբունաներից նրանք արտասանում էին ջերմ հայրենասիրական քարոզներ, ալեկոծում ժամանակի առաջազդորմատությամբ ասլրող երիտասարդության և ժողովրդի սիրութ:

Ազգային Սահմանադրության հրապարակման օրերին Գարեգին Մրվանձտյանը քաղաքական ասպարիֆում հասուն երիտասարդ էր, նա էր Խրիմյանին փոխարինողը և՝ Վարագում, և՝ Տարոնում, և՝ Վանում: Սահմանադրության գործադրումը հայկական գավառներում 1860-ական թվականներին շատ հասկանալի պատճառներով արգելվելու էր հանդիպում: Մրվանձտյանը կանգնած էր Սահմանադրությունը հայկանքում թրականացնելու դիրքերի վրա և երբեք իր դիրքերը չէր զիջում հակառակորդներին: Այն ժամանակ, երբ Վանում իշխում էին Պողոսյան կուսակցության տը գետ ներկայացուցիչները, որոնք վարկա-



Դաստիարակություն

(1873 - 1894)

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՄԿ. ՍՐՎԱՆՉՅԱՆ

բեկում էին Ապողոսյաններին¹⁾, Գ. Սըրվանձտյանը կանգնած էր ժողովրդի շահերը պաշտպանողների դիրքերի վրա: Այս ժամանակ, երբ Ս. Կարապետի Վանքում մի շարք եկեղեցականներ մտացած ժողովրդին և իրենց Հոգեուր պարտականությունները զբաղվել էին անձնական դամերով, Սրբանձտյանը անողոք պայքար էր մղում նրանց խավարամտության դեմ: Նա Տարոնում հրատարակելով՝ «Արծուիկ Տարօնոյց հանդեսը ջախչախիչ հարվածներ էր հասցնում պահպանողականներին, որոնք ոչ մի առիթ բաց չէին թողնում Խրիմյանի ու նրա աշակերտների դեմ կազմակերպած սուր պայքարում»:

Գ. Սրբանձտյանը հենց աշակերտական սեղանի վրա ճամփակեց «Պամիկ» հասարակությունը, որ պատահականությունների և կամայականությունների պատրաստի զոհն էր: Նա որպես գավառացի և միշտ գավառներում գործող, առավել, քան որևէ եվրոպական կրթություն ստացած տաճկահայ, ճանաչում էր «Պամիկներին», նրանց առօրյան, զիթուր նրանց Հոգեուր պահանջները: Ուստի և պատահական չէր, որ Սրբանձտյանն իր գրական, հասարակական և կրոնական գործունեության ողջ ընթացքում ծառայեց միայն և միայն այդ «Պամիկներին»: Նա մեռավ այդ ժողովրդի շահերի համար, իր Հոգեուր վրա ծանր կապարի նման կրելով նրա տառապանքներն ու վշտերը:

Իր գրական-հասարակական գործունեության ընթացքում Սրբանձտյանն ապրեց երկու զիլաւոր էտապ: Առաջին էտապում նա հանդիս էր գալիս որպես հրապարակախոս, իսկ երկրորդում՝ որպես ժողովրդական բանահյուսությունը նշանավորող և գրառող: Առաջինը մշակվեց Վարագում ու Տարոնում—«Արծուիկ Վասպուրականի» և «Արծուիկ Տարօնոյի» շրջանում, իսկ երկ-

րորդը՝ հասարակական գործունեության այն շրջանում, երբ նա մերթ քննչի, մերթ նվիրակի և մերթ ուղեկորի գավաղանը ձեռին շրջում էր վշտացյալ Հայաստանի այս ու այն դատապում: Առաջին էտապում նրա անմիջական ուսուցիչը Մկրտիչ Վ. Խրիմյանն էր, երկրորդում՝ ժողովուրդը:

Առաջին էտապում Սրբանձտյանը քիչ դործեր չունեց: Գրական հասարակական ուղղության մեջ նա կատարյալ շրջադարձ կատարեց, հակիմելով դեպի ժողովրդական դրականությունը: Այս նոր շրջանում Սրբանձտյանի գրական գործունեությանը համընթաց քայլերով առաջ էր գնում նրա բաղադրական գործունեությունը:

Եթե Ալիշանը հանդիսացավ այն կարկառուն դեմքը, որ դեռևս հիմնական թվականներին ճիշտ և ժամանակին արժեքավորեց հայ ժողովրդական «Պամիկներ» երգերը, սակայն հանդամանքների պատճառով չկարողացավ մտնել ժողովրդի մեջ, չկարողացավ անձամբ լսել ու գրի առնել նրա բան ու բառը, ապա Սրբանձտյանը հանդիսացավ այն մշակը, որին մենք պարտական ենք մեր հայրենի առասպեկներն ու էպոսը կորստից փրկելու համար: Նա ոչ միայն հավաքեց, դնաւատեց, հրապարակեց, այլ և ստեղծեց հավաքողների մի ամբողջ պլեատա իր հովանավորության ներքո:

Առաջին մարդը Գ. Սրբանձտյանն էր, որ կանգնեց այն մտայնության դեմ, ըստ որի հայ ժողովուրդը կամ չի ունեցել էպոս և կամ եթե ունեցել է, կորստի է մատնել իր էպոսը: Այս առթիվ հայ մեծ մանկավարժ Սեղբակ Մանդինյանը «Վարժարան» ամսագրում դրում էր. «...Սրբանձտյանի ծառայությունը և մեծ ճաշակը հենց նորանումն է, որ անհավասներին հավատքի բերեց, այն հրապույշներն իրանց առաջն իր օրինակ դնելով: Նորա ժողովածուն

¹⁾ Այսպես էին կոչվում Վան քաղաքում 1850-ական թվականներին ծնունդ առած հոսանքները Վանի հոգեռ գործերի ղեկավարն էր Պողոս վարդապետը, որը կիսագրագետ էր և հակառակ ամեն տեսակ պրոգրեսիվ ժողերի: Նրա կողմանիցները պայքարում էին Վանի պրոգրեսիվ հոսանքի գեղ, որին դիմավորում էին Խրիմյանը և Սրբանձտյանը Առաջին հոսանքը Պողոս վարդապետի անունով կոչվում էր Պողոսյան, իսկ երկրորդը՝ Առաջինական:

(«Գրոց-Բրոց»-ը, վ. թ.) բոլորսպին աղ-
գային ողու չնշով է չնշում, որտեղ և՛
ճաշակ կա, և՛ իմաստ, և՛ հանճար, և՛
բարոյականություն, և այս բռնըը մերն
է, մեր հայկականը, և ոչ օտարինը¹:

Միայն ժողովրդասիրությունը և նրա-
նից բղիող հայրենասիրությունը և ոչ մեկ
այլ հանգամանք, իմթան հանդիսացան Գ.
Սրբանձտյանի այս կարգի զործունեության
համար: Ժողովուրդը և նրա հուժկու կա-
րողությունները Սրբանձտյանի տարերքն
էին: Նա իրեն զգում է հայ ժողովրդի զա-
վակը, որին գերել են այդ ժողովրդի լե-
զուն, զիրն ու մազաղաթը, հողը և ջուրը,
չին ու նոր հիշատակարանները: Այդ բոլո-
րը, ինչպես ասում է Հեղինակը, «վերա-
պատմեր են հետապայից Հայաստանի նա-
հապետաց, դյուցաղանց, թաղավորաց և
տառքինյաց անուններն ու զործերը²», ուր
նրա երկնքի ասաղին անդամ «ամենքն ալ
խորհրդավոր անուն մը ունեցած ենք»):
Նա անհրաժեշտ է համարում տակալին Հա-
յաստան անունը կրող այդ երկրից ընծա-
րերել հայ ընթերցողին: Ընծա նրա «Հողեն
ու ջրեն», այն ժողովրդին, որ «հապար
անդամ խորամանկության ու բանավորու-
թյան փորձեր անցուցեր են, փորձեր խլե-
լու այս ազգի արմատը այդ արտեն, կամ
փոխելու այն հողի հատկությունը, որ այլ-
ևս չըստացնէ զհայ, և չերեկ Հայության
նշույլ մը³):

Երբ հրապարակ իջավ ծավալով փոք-
րիկ, բայց բոլանդակությամբ հարուստ
«Գրոց-Բրոց»-ը, հայկական մամուլն ա-
մենուրեք գրվատող գրախոսականներ գը-
րեց: Հեղինակը ծանոթ և անծանոթ բա-
նասերներից բարձաթիվ նամակներ ստա-
ցավ, որոնցով նրանք հայրենի հողի տքնա-
ջան մշակին նորանոր հաջողություններ
էին մաղթում: Նրանք առանց բացառու-
թյան հիացմունք էին հայտնում այդ գրքի

մասին և ցույց տալիս այն ուղին, որով
ոկտաք է ընթանա Սրվանձտյանն իր հետա-
դա զործունեության ընթացքում:

Բուն ազգային դրականության սահմա-
նակակ քանակության պատճառով շատ
հայ ընթերցողներ, —մանավանդ նրանք, ո-
րոնք ազգում էին հայրենիքից հեռու, օ-
տար վայրերում, —կարծում էին, թե հայ
դրական միտքը տմուլ է և թե այն զար-
դացման հեռանկարներ չունի: «Գրոց-
Բրոց»-ն այսուղ ևս վերացրեց այդ թյուր
կարծիքը և զարձավ իր ժամանակի համար
մի տեսակ «Վերը Հայաստանի»: Այսպես,
օրինակ, Քյուսահամակ հայ ուսանող Դել-
ֆյանը 1875-ին Գ. Սրբանձտյանին ուղղած
իր սրտառուչ նամակում գրում է, որ այդ
գրքույիլը գարձել է Քյուսահամակ հայ ու-
սանողների շարադրությունների աղբյուրը,
որպիսի առիթով նրանք մեծ մասը թարգ-
մանել են օտար լեզուներով:

Այդ հակարական նշանակության պատ-
ճառով «Գրոց-Բրոց»-ը «Վերը» նման
բախտ է ունեցել չընթերու քաղաքից քաղաք,
հայ ուսանողներին հայրենի աշխարհի հետ
ծանոթացնելու համար:

«Ձեր «Գրոց-Բրոցը» այժմ պա-
ղել է», —գրում էր Դելֆյանը իր նա-
մակում, «ուսկից կերթա ի Վյուրց-
պուրկ և այլուր գանվող հայ ուսանո-
դաց և ի վերջո կը դառնա կրկին առ
խօս»⁴ :

Թե որքան մեծ էր «Գրոց-Բրոց» արժեքը
հայ գրական գանձարանի համար, ցույց
է տալիս ժամանակի հայ մտքի ներկայա-
ցուցիչների կարծիքը: Այդ գրքույիլը հա-
փշտակությամբ էին կարդում Ալիշանը և
Վենետիկի մյուս ժիարանները: Մեծ զիտ-
նականն ու բանաստեղծն այդ պղաիկ գըր-
քին նայում էր մանկական հրճվանքով:
Հեղինակին ուղղած նամակում Ալիշանը
գրում էր, թե իր վաղուցվա փափազն է ե-

1) Գրի առած այդ նյութերը, որ մեծ մասմբ
անտիպ էին, որու գնացին Վանում առաջին համաշ-
խարհային պատերազմի ժամանակ:

2) «Վարժարան»: 1882, 1-2, էջ 12. Վ.-Բ.

3) «Գրոց-Բրոց», էջ 4.։

4) Խույնը, 4-6.

1) «Համով-Հոսով», 1884, Կ. Պոլիս, էջ մԶ.

դել լսել Հայաստանի զանազան կողմերի մասին պատմվող ավանդությունները, իր գրած ու գրելիք աշխատությունների մեջ անունները, դեպքերը, և այլ պարագաները ճշգրիտ նշանակելու համար:

«... Քանի-պատմիկ հաճո եղավ, և որքան չնորդակալ եմ թե ընծայելուրդ և թե ընծայիդ, որ ավելի հաճոյացավ, երբ կարդացի և երբ իմ ընկերակեցքս ալ նույն հաճությամբ կարդացին... Միայն թե ես այդ չափով դոհ չեմ ըլլար,—ավելի մեծ Բրոցներ կուղեմ, որ Գրոցն ալ ավելի ընդարձակ ըլլառ»¹⁾—զրում էր Ալիշանը՝ Սրվանձյանից այդ գրքումին ընծայ ստանալուց հետո: «Գրոց-Բրոց»—ը կարդալուց հետո դրական կարծիք հայտնեց Մելքոնեն (Բաֆֆի), որ տպագրվեց «Մշակ»-ում: Նա այդտեղ, ինչպես և հետաքայում իր «Սամվելց-ում», մեղադրական ակտ էր գրում մեր բոլոր պատմաբանների և գրողների հասցեին, մեղադրելով նրանց այն բանի մեջ, որ նրանք իրենց երկերում մոռացել են ներկայացնել մեր ժողովուրդն իր հիշատակաբաններով ու ավանդություններով: Բայց Գ. Սրվանձյանն իր բրինձերով պեղեց հայրենի անդ ու անդաստանը և ժողովրդին ու բանասիրությանը նվեր բերեց նրա գրոցները, որոնք «որպես բնադիրը մի կենանու... կազմվածքի մասին, նրա մինչ ջրեղեղյան գոյության մասին, այնպիս և հետախույզ հնագետը մի ժողովրդական ավանդությունից կարող է եղրակացնել նույն ազգի անցյալ կյանքի այս ու այն ձեմի-րը»²⁾: Մելքոնական գտնում էր, որ ժողովրդական ստեղծագործությունը ծնունդ է այդ ժողովրդի վառ երևակայության, որ յուրաքանչյուր ազգի դիցարանության մեջ հանդես են գալիք նրա փիլիսոփայությունն ու մանվորությունը: Ահա թե ինչոր անհամեցտ էր, որպեսզի մեր գրականությունը հարստանար ժողովրդական-ազգական նյութերով:

Սրվանձյանի «Գրոց-Բրոց»-ը ինչ-

պես մասամբ և «Հնոց-Նորոցը» եկան լրացնելու այլ պակասը:

Գ. Սրվանձյանի երկերն ընդհանրապես այն կարգի գործեր են, որոնք, ինչպես նկատել են չափ ըսնաստեղծեր, մեր գրականության մշուշի մեջ փայլել են որպես լուսալոր աստղեր: Եվ այդ հատկապես ժողովրդական դրականության ասպարելորմ: Դրա համար էլ մեծ է այստեղ Սրվանձյանի դերը:

«Գարեգին վարդապետը մեր սիրաբան կղերին այն ուսումնախույզ դասեն է, որ Ս. Թարզմանչաց դարեն սկսելով, ժամանակ առ ժամանակ, հայ մատենազրության մշուշը փարատող լուսավոր աստղեր ցոլացուցած է մեր ազգային հորիզոնի վրա», զրում էր Ա. Ալիշանը նույն «Գրոց-Բրոցի» մասին գրած գրափոսականի մեջ:

«Հնոց-Նորոցից», «Գրոց-Բրոցից» ու Փյանանայից» հետո սկսեցին հրատարակվել հեղինակի մյուս նշանափոր գործերը՝ «Համով-Հոտով», «Թորոս Աղքար» Խորագրերով, որոնք հեղինակվեցին այլ պայմաններում, այլ ազգակներով և որոնց մեջ պիտի փնտուել հեղինակի հաստնացած ոգին և հայրենասիրությունը:

Գ. Սրվանձյանի հայրենասիրությունն իր ձեմով ընդհանրապես, իսկ այս վերջին գործերի ու նամակագրությունների մեջ մասնավորապես, չեշտված է հանդես գտնիս: Այդ հայրենասիրությունը Ալիշանի տեխների շարունակությունն է Խրիմյանի պրիմայի միջամատ: Դա մի նոր աստիճան է: Դա տեսությունը պրակտիկայում իրադրությունի հայրենասիրությունն է, որը շատ տարբերիչ գծերով զանազանվում էր վաթուունական թվականներին հայ հայրենասեր գրողների հայրենասիրությունից:

Այս վերջին գործերը հեղինակի երկարատև ուղերձությունների արգասիք են, որոնք մի կողմէց գրականության, մյուս կողմէց պատմության ու աշխարհագրու-

1) «Մանաւայ», 1876, էջ 21—22.

2) Մելքոնակ, «Մշակ», 1875, թ 3.

թյան համար՝ անսպառ նյութ հանդիսացան:

Այն ժամանակ, երբ արեվմտահայերը առավել շատ թարգմանություններում էին զբաղված, երբ Փրանսիական ռուսուցիկ ոճը աստիճանաբար նրանց զերել էր, Սրբանձտյանի երկերը իրենց պարզ, մասսաներին հասկանալի լեզվով ու ոճով հրապարակ իջան իրենց հայրենաբույր համով ու հոտով:

Սրբանձտյանի գրական-ուղեղբական երկերը մասամբ հիշեցնում են Ղ. Ալիշանի «Հուշիկը Հայրենեաց Հայոց»-ի հատորները, սակայն բնավ նույնը չեն գիտական արժեքի տեսակետից: Հեղինակն իր դրեթե բոլոր դործերը շարադրելիս հեռու է եղել խիստ գիտական բնավորություն տալու մտքից: Նա Խրիմյանի նման իրենը համարեց բովանդակ Հայստան աշխարհը: Նրա զործերն ամբողջապես շարահյուսվեցին այդ երկրի զաշտերում, լեռներում և հարստահարված ժողովրդի անսեղան խրբճիթներում իր ծննդերի վրա և լույս տեսան աննշան փոփոխություններից հետո: Հետեւապես անարդարացի են որոշ բանասերներ, որոնք «Հուշիկները» բաղդատելով Սրբանձտյանի «Գրոց»-ների հետ խիստ անողոք են վերջնիս նկատմամբ:

Դ. Սրբանձտյանն այդ կարգի բանասերներին էր նկատի առնում, երբ դեռևս «Գրոց-Բրոց»-ը գրելիս ասում էր.

«Միտք այն չէ, որ ընդարձակեմ տեսությունս այս ընդարձակ և ցանկալի խնդրույն վրա (խոսքը վեպերի և առավելների մասին է. Վ. Բ.) և ոչ գործու կուզեմ համաստելիությանց թերթերն ու մաքերը: Ոչ Հ. Ղ. Ալիշանի Հուշիկն ունիմ, ոչ Տ. Ս. Երեմիա եպիսկոպոսի Հայրենասիրությունը և ոչ ասոնց նմանները: Անոնք արդարեւությունների ու եղանակ ունեցող անձանց դորժեր են»¹⁾:

Խաղաղ կյանքի կարու լիներով նա անկարող է եղել տքնել և պրատումներ անել:

Նրա թափառականի գավաղանը մաշվեց հայոց լեռներում և անդ ու անդաստաններում: Այս կապահկցությամբ նա արտահայտում է իր գժղոհությունը այդ աստանդական վիճակից:

«Ծանոթ է ընթերցողաց, թե մեր ազգին մեջ պաշտոնի կամ գործողության հատուկ սահման մի չկա, մանավանդ եկեղեցականց համար: Զենք կարող մենք մասնավոր ասպարիզի մը մեջ հառաջանալ կամ հատկապես մշակել ճյուղ մը, զօրինակ, այսօր քարոզիչ, վաղը ժաղովով մը անդամ, օր մը առաջնորդ, խաղաղաբար, ուղևոր, դատավոր, վանահայր, տեղական վարչական ժողովոց անդամ: և ևն, կարճ ըսել, ես իսկ անցած եմ արդ ամենեն. և շատ ես անախորժ անցքեր է, որ զործողի մը առնել կենեն, և ծանր զժվարություն կը պատճառեն դորժելու կամ ընթանալու»¹⁾:

Օժտված լինելով ստեղծագործական տաղանդով Սրբանձտյանը հայրենի ընտթյունը նկարագրում է խիստ բնականորեն, հեքիաթները պատմում սոխակի լեզվով, քարացած իրերին կախարդի պես կենդանություն է պարզվում: Այս տեսակետից իր ընտրած և ներկայացրած նյութերով նա զարձալ «Ժիր մշակ» հայագիտության համար: Նրա երկերը ներկայացրին Հայաստանն իր բնությամբ, հայ ժողովուրդը իր կենցաղով, սովորություններով:

Ժամանակի նշանավոր գեմքերից մեկը՝ Գրիգոր Օտյանը այսպես է գրում Գարեգին Սրբանձտյանին.

«Զեր ոճին մեջ հայոց կուապաշտական դարերու մողությունն ու դյութությունը կա. ձեր զգացումներն ու մտածությունները քրիստոնեական դարերուն սրբությունն ու կուսությունը ունին... Դուք ոչ իրքն բնագետ ու բնալույժ կը պարտիք ու կը դատելք ծառն ու քարը, հողն ու ջուրը, դուք հոգի կը տեսնեք

1) «Գրոց-Բրոց», էջ 5.

2) «Համով-Հոտով», 1884, էջ Ա. Բ.

ամեն բանի մեջ և եթե բան մը հոգի չունի, դուք հոգի կուտաք անոր»¹⁾:

Երջելով Հայաստանի մեծ մասը, ծանոթ լինելով այդ վայրերի պատմական հիշատակարաններին, չեն ու ավելակներին, երկրի ներկային և անցյալին, Գ. Սրբանձտյանն ոքանչելիորեն է պատկերում այն: Այդ իմաստով «Թորոս Աղբար»-ն ու «Համով-Հոսով»-ը ներկայացնում են մնության չքնաղ տեսաբանները, ուր իրար հաջորդելով երեսում են Հայաստանի բնակիչներն իրենց խինք ու լացով, երկրի բոնականները, հարստահարող ուժերը, հայրենանվեր առաջնորդներն ու անպաշտպան աշխատավորները:



Գարեգին Սրբանձտյանի հայրենասիրական գրական գործունեությունն սկսվում է 1850-ական թվականներին, Վարագավանքում Խրիմյանի խմբագրությամբ հատարակվող «Արծուի Վասպուրական» ամսաթերթում: Սրբանձտյանը ոչ միայն աշխատակցել է առաջնորդներին, այլև եղել է նրա նախ փոխմարդկերը, ապա՝ խմբագրիր: Դա Սրբանձտյանի հրապարակախոսական ասպարեզն իշխելու առաջին, բուռն էտապն էր, երբ երիտասարդ հրապարակախոսն իր վառվուն, անկեղծ հայրենասիրական գրվածքներով վարակիչ արդեցություն ունեցավ թերթի ընթերցողների վրա: Ճիշտ այդ ժամանակներումն էր, երբ երիտասարդ հակոբ Մելիք Հակոբյանը (Բաֆֆի) Պարսկաստանի հեռավոր գավառներից սկսեց ձայնակցել Խրիմյանին ու Սրբանձտյանին: «Արծուի Վասպուրական»-ի էջերը զարդարվում էին առողջամիտ հոդվածներով և բանասեղծություններով:

Գաղափարական հարցերում Խրիմյան-Սրբանձտյան-Բաֆֆի եռյակի միջև կար նույնություն: Բաֆֆին իր գործունեության կենտրոնը փոխարժում է Վարագ: Նա այսուել որոշ ժամանակ աշխատելով:

ուսուցչի պաշտոնով, միաժամանակ դառնում է հայրենասիրական դրականությանը տոն տվյալներից մեկը:

«Արծուի Վասպուրականի» և այդ եռյակի նշանաբանն էր աշխատել հայրենի հոգի վրա, ժողովրդի մեջ, ժողովրդի համար:

Սրբանձտյանն այդ օրերից արդեն քաջածանոթ էր մեր ժողովրդի նիստ ու կացին և քաղաքական վիճակին: Նրան օգտակար զառնալու համար Սրբանձտյանը գրում էր նախ բարոյական-հայրենասիրական հոգվածներ և պահանջում էր, որպեսզի յուրաքանչյուրն իր լուման ձգի ժողովրդի դանձարանը:

Նա գտնում էր, որ այն, ինչ անօգուտ է հասարակությանը, ինչը վնաս է բերում հասարակական շահերին, անպայման անբարոյական է: «Հորդորակ» բանասեղծության մեջ նա ամենքից պահանջում է քրտնաջան աշխատանք, նվիրվածություն, որպեսզի լուսավորվի Հայրենիքը: «Քըրտինք, քրտինք կուրե այս հող»¹⁾, գրում է նա:

«Արծուի Վասպուրականի» էջերում Սրբանձտյանը զետեղել է հարուստ նյութեր, որոնցից նշանավոր են Հայրենասիրության մասին նրա ունեցած հայացքները: Դա «Հայրենասիրություն և հայրենիք» հոդվածն է, որ սկսվում է հետեւյալ գեղեցիկ արտահայտությամբ՝ «Հայրենասիրություն մի անկշխու և գերհարզ առաքինություն է և իսկական բարյաց բուն արմատ»: Հոդվածն իր նշանակությունը չի կորցրել մինչև իսկ մեր օրերի համար:

Հայրենասիրությունն ըստ երիտասարդ Սրբանձտյանի «մի չքնաղ և զորավոր ձիքը է», որով երջանկացել են շատ ու շատ ազգեր: Գևա լուսավորություն, եթե պակասում է հայրենասիրության նուանդը: Եթե կա այն, կա և ազգային բարօրությունը: Հայրենասիրության զգացումը և

1) «Արծուի Վասպուրական», 1859, № 11, էջ 290.

2) Այս հոդվածի բոլոր մեջրերութերը տես «Արծ, Վասպ. և, 1862, № 3».

նրա գաղափարը ամենաուժեղ և անդարտելի վեցնքն է մի ժաղավրդի համար: Դա այն առաքինությունն է, որ մարդուն ընդունակ է զարձնում լինելու հայրենի հոգի ու ջրի և նրա ավանդությունների չերտ պաշտպանը: Այսպես էին մեր քաջ հայրածիրքը, որոնց «օրինակներով կը ճանչնամք հայրենասիրության բուն խկությունը, որ թե մենակ, թե մեռուցանե, անմահ է»:

Սրբանձայանը լավ էր ճանաչում Հայաստանը: Դեռ պատանի հասակից պատմությունն ուսել էր լավագոյակ հայկարանների մոտ: Մրկմյանի դպրոցում նա բարձրացավ մի նոր աստիճան, ուր օր ու գիշեր տքնում էր դպրոցի ձեռազբերի ու տպագիր հեն զրբերի վրա: Նա հիանալի զիտարեր Եղբայրն և Քերթողահոռը: Նա շատ լավ էր գիտակցում Հայաստանի մասնաւուման վնասակարությունը երկրի քաղաքական կյանքում: Այդ վիճակը Սրբանձայանի զրծի տակ պատկերվում էր այսպես:

«Ներկա հայրենիք մեզ համար մի բազմաժամանյա մարմին է. գլուխ՝ առանց սղարանցի, թեւեր առանց բաղուկի, անձ՝ առանց անդամոց, սիրուկնդանի, բայց վիրավոր, աչք լուսավոր, բայց փակված, լուրաքանչյուր մասունք մթմյանցից հեռու անջատյալ, ցրված, բայց ոչ կորուսյալ:

«...Նա շատ անդամ այս վիճակին պատահեր, բայց ոչ երբեք կորեր է, թե պատանոց կտրեցին բազակներ դրացան, թե բազուկներ կտրեցին, ոտերով առաջ գնաց, թե սիրու վիրավորեցին, հոգին կենդանի մնաց և այժմ արտիսի դրության մեջ կշարժի նա դեռևս ու կը հասածի: Շատեր մեռած համարեցին, բայց կենդանի էր, ճանաչեցին, ոմանք անդամալույծ է, ասացին, բայց ահա ոտքի ելած կը հառաջն, տեսան ու զարմացան, բայց ի՞նչ օգուտ, աչքը չկա, ասացին. Վերջապես դա հառաջելով պիտի վիճերու մեջ ընկնի, տիղմերու մեջ թաղալիք և

հայնժամ զուցե անկանդնելի լինի կորուսան:

«Որպա մերձենանք, ձեռքն բռնենք, առաջնորդենք, կամ սորա աչքեր բժըշկենք, ասողներ չեղան, և թե լինեն ալ, այն վիրավոր արթուն սիրու պիտի չհաճեր, չներեր յուր անդամներուն օտարին առաջնորդության ետևեն երթալ, ինչ որ ինքն չառ անդամ այս փորձն արած էր և փոխանակ օգտի, ընդուներ էր վիշտ, որո ցավովն գեռն է կհեծն ողորմաբար:

«Բայցահայր է աստծու, այս մարմին մեք իսկ եմք, մեր պատկեր այս մարմինն է. ցրված եմք մաս մաս զանազան տեղեր, ուրիշ ուրիշ ազգաց տերությանց ի ներքո»....

Զարդացնելով իր միտքը՝ Գ. Սրբանձայանը հանդում է այն եղբակացության, որ այդ բազմամանյա մարմնի վրկության միակ միջոցը հոգացավ՝ հայրենասիրությունն է, որ ստեղծվելու է լուսավորությամբ, անշատված հայ հատվածների հողմամբ, որով մեր ազդի մեջ կտիրե մի սիրու և իր հոգի:

«Բարոյականություն հանդերձ ազգասիրությամբ պետք է ուսուցանել մեր ժողովրդյան, այսպիս կճանաչն նոքա ճըմարիտ հայրենասիրություն, այսպես կղառնան անձնանվեր իրենց հայրենյաց: Որովհետեւ ճշմարիտ հայրենասիրություն կկայանա հասարակաց օգտին վերա, ուրեմն անխափիր պետք է հաղորդենք միշանց բարիքը»:

Սրբանձայանի կարծիքով ոչ միայն հայրենասեր չեն, այս օգտակար չեն այն մարդիկ, որոնք մտածում են ըստ առածի՝ «որտեղ հաց, այստեղ կաց»: Անիմասա է դանում նաև դավառասիրությունը այն կարգի մարդկանց, որոնք միայն իրենց ձննդավայրն են համարում իրենց հայրենիքը: Հոգվածի վերջում հեղինակը կոչ է անում հայրենակիցներին օգնել հայրենիքին ինչով կարող են:

Երկրի միասնականություն, պետակա-

նություն, համատարած կրթություն, ահա նրա պահանջը իր ժամանակի սահմանադրականներից, որոնք ջանում էին փրկել ժողովրդին: Մի զաղափար, որ, սակայն ի պատիվ իրեն, բնավ չի ունեցել աշխարհական ակնկալություններ:

«Կոռունկ»-ում 1862-ին տպագրած մի Հողվածում Սրվանձնայանը մեր ժողովրդին համարում է քաջ, բայց ոչ բանավոր, սակայն դեպի իր թշնամիները անխնա:

Այս հողվածում Սրվանձնայանը զարդացնում էր այն միտքը, թե առանց հավաքական անհատականության չի կարող լինել հայրենիքի պաշտպանություն:

Բնավորությամբ զգայուն Սրվանձնայանը 1860-ական թվականներին գրած գործերում զգալի նրբությամբ էր ներկայացնում «Եխնական հայոց կյանքը»: Եխնական հայոց կյանքի «Հայաստան թշվառ նկարգրություն» գրվածը մի ողբերգություն էր, ուր ներկայացված է Վասպուրականի հայ գյուղի կյանքը:

Պատմական ճշգրիտ փաստերը այսուեղ տրվում են լիրիկական գեղումների միջնորդով: Այսուեղ ընթերցողի առաջ բացվում է մի իրական աշխարհ ողբերգով լի: Ընթերցողի աչքի առաջ է բողոքարկու հեղինակի իր ցասումներով:

Այս գրվածքում էր, որ Գ. Սրվանձնայանն առաջին անգամ տպագրեց «Հայաստանցի հայ պառախներու» հոչակավոր աղոթքը, որով առաջին փորձն արավ ժողովրդական բանահյուսության սահմանները ոտք դնելու: Արդ աղոթքը հայ ժողովրդի խաղաղակարության, լավատեսության, հայրենասիրության և բարոյակա-

նության «Հայր մեր»-ն է: Դա հայ գեղջկու ըղձանքների պարզ և անպաճառ աղոթքն է, որ վերջանում է այսպես «Աստված, դու հացին էժանութեն տա, զրին առատութեն, անձրեն շատութեն, մեր բազում մեղաց թողութեն... երկրի ջոջներաց սեր միաբանութենչ»)...

Սրվանձնայանի վերոթվալ, ինչպես և այլ գործերը հայրենիքն անձից բարձր դասող մարդու ստեղծագործություններ են, որոնց համար նա իր ժամանակին զովասների ու իրախուսանքների արժանացավ Վանի լուսավորյալների կողմից, բայց որպես Խրիմյանական, դարձավ Պողոսյանների աչքի փուշը:

Ազգային սահմանադրության հրապարակման օրից ի վեր մինչև մայս Գ. Սրվանձնայանը մնաց որպես սահմանադրական: Նա վիպին գիտակցում էր, որ սահմանադրական մինելը իրենից պահանջում էր անձուրացություն, մեր ժողովրդին քինոտինյան վիճակից հանելու համար նվիրվածություն, օրենքը հայի համար ճանաչելի դարձնելու հմտություն և զեկավարություն:

Խրիմյանն այդպիսի սահմանադրականների գլխավորողն էր Վանում, Տարոնում, Պոլսում և այլուր, իսկ նրա ամենահավատարիմ պաշտպանն ու դաղափարակիցը՝ Գ. Սրվանձնայանը: Առաջինին սպառնացող հրացաններն ու ատրճանակները բազմից անդամ պարզվել են և վերջինին պատուհանների մոտ...

(Շարունակելի)

Ա. ԹՋՈՅԱՆ

1) «Արծուի Վասպուրական», 1862—1863.
Խ 3, էջ 71.